


«ՀԱՅԱՔՎԵՆ»՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈԳԱՅԹՆԵՐՈՒՄ

Posted on July 3, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երևան, 29 հունիս 2023

- Եվ մինչ թշնամին Հայաստանի Հանրապետության հետ հակամարտության գծում և Արցախի խաղաղ բնակչության դեմ ամենօրյա զինված սադրանքներ է նյութում, որոնց պատճառով խափանվում են սահմանամերձ շրջանների գյուղատնտեսական աշխատանքները, ունենք զոհեր և վիրավորներ,

- Մինչ իրենց ընդդիմադիր հռչակած քաղաքական ուժերը կառավարության հետ ամենօրյա անպտուղ «լեզվակռիվ-փոխհրաձգության» մեջ են,

- Մինչ Փաշինյանի գլխավորած իշխանությունն օր-օրի, քայլ առ քայլ ավարտին է հասցնում Արցախը Ադրբեջանի անբաժանելի մաս ճանաչելու կործանարար նպատակը հետապնդող, «Խաղաղության պայմանագիր» հորջորջվող պարտվողական համաձայնագրի կնքումը,

Նվիրյալների մի խումբ՝ իրավաբաններ, քաղաքագետներ, մտավորականության ներկայացուցիչներ, փորձում են փրկել իրավիճակը քաղաքացիական-օրենսդրական նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության անունից Արցախն այլ պետության մաս ճանաչող որևէ գործողություն քրեականացնելու առաջարկով:

Նախաձեռնությունն անվանվել է *Հայաքվե*:

Ո՞րն է դրա եռությունը և այս վճռորոշ իրավիճակում ի՞նչ կտա մեր ժողովրդին այդ շարժումը, որը վերջերս քննարկվում է ոչ միայն մամուլում, սոցիալական ցանցերում, այլև երկրի բախտով մտահոգ բազմաթիվ շրջանակներում, ընտանիքներում:



Կազմակերպիչները կարճ ժամանակամիջոցում կարողացան իրենց մտահղացման մասին բազմաթիվ լուսաբանումներով ոչ միայն մամուլով հանդես գալ, այլև բազմամարդ հանդիպումներ կազմակերպել Երևանում և մարզերում: Նրանք պարզաբանում են.

Կազմվել է ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարող մի Նախագիծ, ըստ որի՝ ՀՀ անունից Արցախն այլ պետության մաս ճանաչող պաշտոնատար անձը պատժվում է 10-ից 15 տարի ազատազրկմամբ:

Նախագծում կա ևս մեկ կետ՝ Հայոց ցեղասպանության նշանակությունը Նսեմացևոյ գործողությունների քրեականացում: Նույն ժամանակով պատիժ սահմանվում է Հայոց ցեղասպանությունից հրաժարված պաշտոնատար անձի համար:

Նախագիծը հիմք է ընդունում ՀՀ Անկախության հռչակագիրը, ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ Գերագույն Խորհրդի 1992 թ. հուլիսի 8-ի որոշումը, ըստ որոնց՝ Արցախի ու Հայաստանի Հանրապետությունների միավորումը և Հայոց ցեղասպանության ճանաչումը մեր պետության կողմից սահմանված համազգային անժամկետ Նպատակներ են:

Ըստ Հանրաքվեի մասին օրենքի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) սահմանում է ստորագրահավաքի անցկացման 60-օրյա ժամանակահատվածը, որից հետո մարզպետարաններում, քաղաքապետարաններում, համայնքապետարաններում, թաղապետարաններում տարածք են հատկացնում ստորագրահավաքն անցկացնելու համար:



Ստորագրել կարող են բոլոր նրանք, ովքեր հանդիսանում են ՀՀ քաղաքացի և գրանցում ունեն ՀՀ տարածքում:

Երբ հավաքվի 50.000 ստորագրություն, օրինագիծը պարտադիր մտնում է ԱԺ օրակարգ և դրվում քվեարկության: Եթե ԱԺ-ն մերժի նախագիծը, ապա ևս 300.000 ստորագրություն կհավաքվի, և նախագիծը կդրվի հանրաքվեի: Հանրաքվեով բավարար ձայներ ստանալու դեպքում նախագիծն անմիջապես հրապարակվում է ու դառնում օրենք: Հետագայում այն կարող է փոխվել *միայն հանրաքվեով*:

Անհիմն լավատես կամ միամիտ պետք է լինել հուսալու համար, թե երկու ամիս ժամանակում հարթ ու խաղաղ ընթացքով կունենանք 50.000 ստորագրություն, մի

քանի որ անց՝ հարցը կլնևարկվի ԱԺ-ում, ձայների մեծամասնությամբ կվավերացվի Հայրենիքին ու նրա շահերի դավաճանությանը խիստ պատիժ սահմանող այդ օրենքը:

Իհարկե, նախաձեռնության կազմակերպիչներն իրենք ևս, նկատի ունենալով աննպաստ հանգամանքներ, ծրագրել են հետագա քայլերը: Կարծում եմ, թե դրանք չեն սահմանափակվի արդեն իսկ հայտարարված՝ հարկ եղած դեպքում 300.000 ձայների ապահովման մի նոր ստորագրահավաք կազմակերպելով միայն: Կապրենք, կտեսնենք:

Գալով մեկնարկած «Հայաքվեին», նշենք, որ Հանրաքվեի մասին օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ այդ նպատակով ստորագրահավաքն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) տարածքում: Վերջիններս պարտավոր են տարածք տրամադրել այդ նպատակի համար:

Եվ, ահա, ինչպես և սպասվում էր, հենց առաջին իսկ օրերից իշխող կուսակցության տեղական մանր ու մեծ պաշտոնավորներն սկսեցին որոգայթներ լարել:

Հունիսի 26-ին, մամուլի ասուլիսի ժամանակ, «Հայաքվե» նախաձեռնության համակարգող Ավետիք Զալաբյանը ահազանգեց. «Հունիսի 20-ին ԿԸՀ-ն գրանցել է «Հայաքվեի» նախաձեռնությունը՝ տալով նրան իրավականորեն պարտադիր բնույթ, սակայն գործող վարչակազմը հերթական անգամ որոշել է ի ցույց դնել իր անօրեն բնույթը՝ փորձելով այժմ էլ խափանել ժողովրդի հիմնարար իրավունքը՝ հանրաքվեի միջոցով իրացնելու իր իշխանությունը»:

ԱՐԻ՛, ՍՏՈՐԱԳՐԻ՛Ր, ՊԱՇՏՊԱՆԻ՛Ր



«Հայա

թվե» քաղաքացիական նախաձեռնության նկատմամբ իրականացվում են օրենքի միտումնավոր և հանցավոր խախտումներ,- [NEWS.am](https://www.news.am)-ի հետ զրույցում հայտնեց նախաձեռնող խմբի անդամ Մենուա Սողոմոնյանը:- Այն ուժերը, որոնք ցանկանում են Արցախը տեսնել Ադրբեջանի կազմում, արդեն իսկ որոշակի քայլեր են արել նախաձեռնության դեմ: Մենք դրանք հանգամանորեն կներկայացնենք: ՏԻՄ-երն արդեն պաշտոնապես պետք է պատասխանեն մեզ տարածք տրամադրելու համար, սակայն

շատ դեպքերում պատասխան չկա, որոշ դեպքերում էլ ապօրինի հիմքերով մեղադրանքներ են»,- նշեց նա: Սողոմոնյանի խոսքով, տարբեր շերտեր «Հայաքվեի» մասին տարածում են քաղաքացիներին ապակողմնորոշող տեղեկություններ, «Հայաքվեն» շփոթում են այլ ստորագրահավաքների հետ, մինչդեռ ստորագրահավաքը ընդամենը առաջին քայլն է, որով օրենքի փոփոխության նախաձեռնությունը մտնի ԱԺ: Ստորագրել հնարավոր կլինի միայն մարզպետարաններում, քաղաքապետարաններում, համայնքապետարաններում: Եղել են դեպքեր, երբ այլ նախաձեռնություններ, այլ անհատներ փորձել են ներկայանալ որպես «Հայաքվեի» նախաձեռնող խումբ կամ խմբի անդամ:

Հունիսի 26-ի առավոտյան, «Հայաքվեի» նախաձեռնող խումբը հաղորդում ներկայացրեց դատախազություն: Երեք օր անց՝ հունիսի 29-ին, Երևանի 12 թաղապետարաններում սկսվեցին ստորագրահավաքները:

Դատելով «Հայաքվեի» պատասխանատուների հաստատակամ ու թիմային կուռ գործունեությունից և առաջին քայլերի արդյունքներից, շարժումը թափ է առնում և համաժողովրդական դառնալու միտումներ ունի: Այդ են վկայում ոչ միայն Երևանում նախաձեռնությանը մասնակցողների բազմաքանակությունը, այլև քաղաքացիների աշխուժությունը մարզերում, որոնցում շուտով կսկսվեն ստորագրահավաքները:

«Հայաքվեին» մասնակցելու ՀՀ քաղաքացիների աշխուժությունը ինքնին երաշխիք է սպասվող որոգայթների հաղթահարման համար: Սակայն, արդյո՞ք այս դեպքում էլ ուրբաթը շաբաթից շուտ չի գա, արդյո՞ք ուշացած չկազմվեց ժամանակացույցը...

(«Հայաքվեի» գործընթացի մանրամասները՝ <https://www.facebook.com/hayaqve> հղումով)

Comments



Վահե – 2023-07-14 09:53:11

«Հայաքուէն» անհասկնալի նախաձեռնութիւն մըն է ինծի համար, Օգոստոս 23, 1990 Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Հռչակագիրը, ուրուն գուէարկեցին Հայաստանի քաղաքացիները Սեպտեմբեր 21, 1991 ին կը հաստատէ «1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն՝ կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:» Իսկ եթէ նախձեռնութիւնը պիտի յանձագործէ Ազրպէյճանի հետ բանակցութիւնը, անկասկած որ Ազրպէյճանը բացառձակապէս առարկութիւն պիտի չունենայ:



Արմենակ Եղիայեան – 2023-07-03 11:21:28

Աւետիք Չալաբեանը քրեական յանցագործ է եւ որեւէ պարկեշտ գործ չի կրնար կատարել: Ստորագրահաւաքով զբաղողները բոլորն ալ այս կամ այն ձեւով պետութեան հակադրուած յանցագործներ են: Ոչ մէկ շինիչ քայլ կրնան առնել: